

ՀՀ ԿՐԹՈՒՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Խ.ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՉԱՐՉՅԱՆ ԱՆՆԱ ՌԱԶՄԻԿԻ

ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՎԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ ՀԱՏՈՒԿ (ՕԺԱՆԴԱԿ)
ԴՊՐՈՑՈՒՄ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԳՐԱՎՈՐ ԽՈՍՔԻ ԽԱՆԳԱՐՈՒՄՆԵՐԻ ՇՏԿՄԱՆ
ՄԻՋՈՑՆԵՐՆ Ու ՄԵԹՈԴՆԵՐԸ

ԺԳ.00.02 « Դասավանդման և դաստիարակության մեթոդիկա» մասնագիտությամբ
մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի
հայցման ատենախոսության

ՄԵՂՄԱԳԻՐ

Երևան-2019

Ատենախոսության թեման հաստատվել է Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում

Գիտական ղեկավար՝

Մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ռ. Ն. Ազարյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

Մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ջ. Հ. Գյուլամիրյան

Մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Թ. Յու. Ազատյան

Առաջատար կազմակերպություն՝

Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2019 թ. մայիսի 16-ին ժամը 12:00-ին, Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում գործող ՀՀ ԲՈՒԿ-ի «Մանկավարժություն» 020 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցե՝ 0010, ք. Երևան, Տիգրան Մեծի 17:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2019թ. ապրիլի 6-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար, մանկավարժական

գիտությունների թեկնածու, դոցենտ՝

Ա. Հ. Սվաջյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի արդիականությունը: Վերջին տարիներին ուսուցիչների և լոգոպեդների պրակտիկայում բավականին մեծ թիվ են կազմում դպրոցական ծրագիրը դժվարությամբ յուրացնող, գրավոր խոսքում՝ կարդալու և գրելու գործընթացում կայուն և կրկնվող բնույթի սխալներ ունեցող սովորողները: Գրավոր խոսքի խանգարումներն առավելապես բնորոշ են մտավոր զարգացման խանգարումներ ունեցող սովորողներին, քանի որ վերջիններս, ունենալով գլխուղեղի օրգանական ախտահարում և դրանով պայմանավորված՝ ճանաչողական գործունեության կայուն խանգարում, որպես երկրորդային դրսևորումներ, ունեն նաև խոսքի՝ մասնավորապես գրավոր խոսքի՝ կարդալու և գրելու գործընթացների խանգարումներ՝ դիսլեքսիա և դիսգրաֆիա: Մտավոր զարգացման խանգարումներ ունեցող տարրական դասարաններում սովորողների գրավոր խոսքի շտկմանը կարող է նպաստել այդ նպատակին միտված խաղերի, վարժությունների ու առաջադրանքների օրինակելի համակարգը՝ մշակված գրավոր խոսքի խանգարումների բազմակողմանի և խորը ուսումնասիրման ու վերլուծության ճանապարհով:

Սակայն մայրենիի ուսուցման գործընթացում տարրական դասարաններում մտավոր զարգացման խանգարումներ ունեցող սովորողների գրավոր խոսքի խանգարումների շտկման միջոցների, մեթոդների և դրանց կիրառման պայմանների հարցերը դեռևս լիարժեք ուսումնասիրված չեն, ինչն էլ դժվարացնում է նրանց ուսումնական գործընթացը, դրանք համակարգման և մշակման կարիք ունեն: Այս հիմնախնդրի առկայությունը բարդացնում է սովորողների հաղորդակցվելու, գրել-կարդալու գործընթացը, ինչպես նաև բացասաբար է անդրադառնում գիտելիքներ ձեռք բերելու, ժամանակակից աշխարհում այս երեխաների սոցիալական հարմարվողականության ու ինտեգրման գործընթացի վրա (Ք. Ի. Լալաևա, 2002; Լ. Ի. Էփիմենկովա, 2015, Լ. Ս. Ելցոտսկի, 2017):

Այս հիմնահարցն ուսումնասիրվել է ինչպես ընդհանուր մանկավարժության (Յ. Ա. Սուխոմլինսկի 1970; Յ. Ս. Կաշենկո, 1994), այնպես էլ հատուկ մանկավարժության (Ի. Ա. Գրաբորով, 1961; Լ. Յ. Յանկով, 1999; Յ. Յ. Վորոնկովա, 2009; Ե. Ս. Սուզանով, 2001 և ըր.) բնագավառում: Գրավոր խոսքի խանգարումների շտկման և կանխարգելման հարցերին անդրադարձել են նաև մի շարք հայ հեղինակներ (Ս. Վ. Ավագյան, 2005, Շ. Ռ. Հովյան, 2007, Ս. Գ. Գրիգորյան, 2007, Ժ. Հ. Պալյոզյան, 2007, Ս. Վ. Սիքայեյան, 2010, Է. Ռ. Թադևոսյան, 2011):

Ներկայումս կրթության ոլորտի բարեփոխումները և կրթության հավասար իրավունքները ենթադրում են աշակերտների ուսուցման որակի բարձրացում, որի համար անհրաժեշտ են նոր մոտեցումներ և ուղիներ: Մայրենիի ուսուցման գործընթացում և լոգոպեդական պարապմունքներին մտավոր զարգացման խնդիրներ ունեցող երեխաների հետ աշխատանքներն իրարից անկախ չեն. դրանք փոխլրացնում են միմյանց և ուղղված են երեխաների խոսքային և ոչ խոսքային գործընթացների զարգացմանը: Հետևաբար, մտավոր զարգացման խնդիրներ ունեցող երեխաների գրավոր խոսքի խանգարումների շտկումը հնարավոր է լոգոպեդի և ուսուցչի փոխհամաձայնեցված աշխատանքի դեպքում: Դրանով են պայմանավորված սովորողների լեզվական տարրական գիտելիքների ձեռքբերումը,

ուսումնական մյուս առարկաների դժվարությունների հաղթահարումը և այդ գիտելիքների գործածությունը խոսքում: Այս առումով՝ մայրենիի ուսուցման գործընթացում սովորողների խոսքային և ոչ խոսքային գործընթացների զարգացման ուղղությամբ իրականացվող աշխատանքների՝ որպես գրավոր խոսքի խանգարումների շտկման միջոցի և մեթոդի դիտարկման ու դրանց մշակման հարցն արդիական է և ունի թե՛ տեսական, թե՛ գործնական նշանակություն:

Հետազոտության նպատակը հատուկ (օժանդակ) դպրոցի տարրական դասարաններում սովորողների գրավոր խոսքի խանգարումների շտկման միջոցների ու մեթոդների մշակումն է և ներդրումը մայրենիի ուսուցման գործընթացում:

Հետազոտության օբյեկտը հատուկ (օժանդակ) դպրոցի տարրական դասարաններում սովորողների գրավոր խոսքի խանգարումների շտկման գործընթացն է մայրենիի դասերին:

Հետազոտության առարկան մայրենիի ուսուցման գործընթացում մտավոր զարգացման խնդիրներ ունեցող տարրական դասարաններում սովորողների գրավոր խոսքի խանգարումների շտկման միջոցներն ու մեթոդներն են:

Հետազոտության վարկածը: Մայրենիի ուսուցման գործընթացում հատուկ (օժանդակ) դպրոցի տարրական դասարաններում սովորողների գրավոր խոսքի խանգարումների շտկումն արդյունավետ կլինի եթե՝

- փորձարարությամբ բացահայտվեն ու հիմնավորվեն հատուկ (օժանդակ) դպրոցի տարրական դասարաններում սովորողների գրավոր խոսքի խանգարումների գերակշռող տեսակները.

- տեսականորեն և գործնականորեն ապահովվի մտավոր զարգացման խնդիրներ ունեցողների գրավոր խոսքի խանգարումների շտկմանն ուղղված մեր կողմից մշակված խաղերի, վարժությունների ու առաջադրանքների կիրառումը մայրենիի ուսուցման գործընթացում.

- մտավոր զարգացման խնդիրներ ունեցող աշակերտների գրավոր խոսքի խանգարումների շտկման՝ մեր կողմից մշակված և փորձարարությամբ հիմնավորված արդյունավետ միջոցներն ու մեթոդները (ոչ խոսքային և խոսքային՝ հնչյունահնչությային գործընթացները զարգացնող լեզվական վարժություններ, գրաշարժողական կարողությունները, տարածական կողմնորոշումը զարգացնող խաղեր և առաջադրանքներ) կիրառվեն մայրենիի ուսուցման գործընթացում:

Հետազոտության խնդիրները.

1. Ուսումնասիրել և վերլուծել հատուկ (օժանդակ) դպրոցի տարրական դասարաններում սովորողների գրավոր խոսքի խանգարումների շտկման ժամանակակից մոտեցումները մայրենիի ուսուցման գործընթացում.

2. Որոշել հատուկ (օժանդակ) դպրոցի տարրական դասարաններում սովորողների՝ մայրենիի ուսուցման գործընթացում դրսևորվող գրավոր խոսքի խանգարումների հիմնական տեսակները.

3. Մշակել մտավոր զարգացման խնդիրներ ունեցող աշակերտների գրավոր խոսքի խանգարումների շտկման միջոցներ, մեթոդներ, մայրենիի ուսուցման գործընթացում դրանց կիրառման պայմաններ և փորձարարությամբ հիմնավորել դրանց արդյունավետությունը:

Հետազոտության մեթոդաբանական հիմք են հանդիսացել՝

- առաջատար գործունեության դերը անձի ձևավորման և հոգեկան

գործընթացների զարգացման գործում (Ս. Կ. Անոхин, 1968; Ա. Ք. Լուրյա, 1974, 1998; Լ. Տ. Վյոտսկիյ, 1999; Դ. Բ. Յլկոնին, 1999; Տ. Լ. Րուբինշտեյն, 2016; Վ. Գ. ՔետրոՎա, 2003; Ա. Ն. Լեոնտև, 2005 և Կր.),

- գործողությունների ու հասկացությունների փոփոխյալին ձևափոխման տեսությունը (Ս. Յ. Գալպերին, 1998),

- փոխհատուցման տեսությունը (Լ. Տ. Վյոտսկիյ, 1999; Վ. Գ. ՔետրոՎա, 2002 և Կր.),

- մանկավարժության ու հոգեբանության մեջ գրավոր խոսքի զարգացման ընդհանուր դրոյթները (Լ. Տ. Վյոտսկիյ, 1997; Ք. Ի. Լալաևա, 1998, 2002; Ա. Ք. Լուրյա, 2002; Ք. Ե. Լևինա, 1961, 2005),

- մտավոր զարգացման խանգարումներ ունեցող դպրոցականների հետ տարվող ընդհանուր շտկող-զարգացնող ուսուցման տեսությունը (Կ. Ա. ՎլասոՎա, Մ. Տ. ՔեՎզներ, 1973; Տ. Դ. Յաբրամնայ, 1995; Տ. Յ. Րուբինշտեյն, 1996; Բ. Ս. ՍուզանոՎ, 2001; Լ. Տ. Վյոտսկիյ, 2003; Խ. Տ. Յամսկիյ, 2008 և Կր.),

- մտավոր զարգացման խանգարումներ ունեցող երեխաների գրավոր խոսքի խանգարումների առաջացման պատճառների, պիտանիշների, մեխանիզմների և դրսևոխման ձևերի մասին տեսությունը (Ք. Ե. Լևինա, 1968; Վ. Վ. ՎորոնկոՎա, 1994; Ա. Ն. Կորնև, 1997; Ա. Կ. ԱկսենոՎա, 2004; Լ. Տ. ՍձեՎկոՎա, 2007; Գ. Վ. Շիրկինա, 2007 և Կր.):

Հետազոտության մեթոդները.

- մասնագիտական և գիտամեթոդական գրականության ուսումնասիրություն, վերլուծություն և ընդհանրացում.

- տարրական դասարաններում դասավանդող ուսուցիչների, դպրոցների լոգոպեդների փորձի ուսումնասիրություն և ընդհանրացում,

- հոգեբանամանկավարժական հետազոտության մեթոդներ (դիտում, հարցում, գրոյց, անկետավորում).

- հետազոտման էմպիրիկ մեթոդներ (գրավոր առաջադրանքներ, ընթերցանության նյութեր, ստեղծագործական և ստուգողական աշխատանքներ, լեզվաքերականական խաղեր, լոգոպեդական խաղեր).

- լոգոպեդական մեթոդներ (բանավոր և գրավոր խոսքի հետազոտում, լոգոպեդական պարապմունքներ, զարգացնող խաղեր).

- մանկավարժական փորձարարություն՝ հավաստիացնող և ուսուցանող.

- մաթեմատիկական վիճակագրական հետազոտման մեթոդներ:

Հետազոտությունն անց է կացվել միայնակ հետ **փոխկապակցված երեք ալյամանական փուլերով**՝ որոնողական, փորձարարական և ընդհանրացնող:

Հետազոտության որոնողական փուլում (2003-2005թթ.) ուսումնասիրվել ու վերլուծվել է մասնագիտական և գիտամեթոդական գրականությունը, հիմնախնդրի դրվածքը հատուկ (օժանդակ) դպրոցներում, որոշվել են հետազոտական աշխատանքի բովանդակությունը, հետազոտության օբյեկտը, առարկան, վարկածը, հետազոտության խնդիրները, ընտրվել են հետազոտության մեթոդները, մշակվել է հետազոտության հիմնական ուղղվածությունը:

Հետազոտության փորձարարական փուլում (2006-2009թթ.) հավաստիացնող գիտափորձի ընթացքում ուսումնասիրվել են հատուկ (օժանդակ) դպրոցի տարրական դասարաններում սովորողների գրավոր խոսքի խանգարումների հետազոտման մեթոդները, ոչ խոսքային և խոսքային գործընթացների շտկման

առանձնահատկությունները, վերլուծվել հավաստիացնող գիտափորձի արդյունքում ստացված քանակական և որակական տվյալները:

Հետազոտությանը մասնակցել են Երևանի թիվ 6, ք. Աբովյանի թիվ 1, Հրազդանի թիվ 1 և Աշտարակի թիվ 1 հատուկ (օժանդակ) դպրոցների 1-4 դասարանի թվով 285 աշակերտ, որից 241՝ հավաստիացնող, իսկ 44՝ ուսուցանող գիտափորձին, որից 21 աշակերտ ընդգրկված է եղել փորձարարական, իսկ 23 աշակերտ՝ ստուգողական խմբերում: Հետազոտության այս փուլում մեր կողմից մշակված հարցաթերթիկներով ուսումնասիրվող հիմնահարցի շուրջ անցկացվել է հատուկ (օժանդակ) դպրոցների 79 ուսուցիչների, դաստիարակների և լոգոպեդների, ինչպես նաև ավարտական կուրսերի 80 ուսանողի իրազեկման մասին սոցիալական հարցում:

Հետազոտության ընդհանրացնող փուլում (2012-2014թթ) ընդհանրացվել և համակարգվել են ստացված արդյունքների վիճակագրական տվյալները, վերլուծվել և ընդհանրացվել են հետազոտության արդյունքները, ձևակերպվել է հետազոտության եզրակացությունը, կազմվել հավելվածը, ավարտուն տեսքի է բերվել ատենախոսական աշխատանքի բովանդակությունը:

Հետազոտության գիտական նորույթը.

- բացահայտվել և վերլուծվել են մտավոր զարգացման խնդիրներ ունեցող դպրոցականների գրավոր խոսքի խանգարումների առանձնահատկությունները, գրավոր խոսքում թույլ տրված սխալների հաճախականությունը, ինչպես նաև որոշվել են գրավոր աշխատանքների տեսակների անցկացման եղանակներն ու բովանդակությունը.

- որոշվել է հատուկ (օժանդակ) դպրոցի տարրական դասարաններում դասավանդող ուսուցիչ-դաստիարակների և «Հատուկ մանկավարժություն» մասնագիտացման ավարտական կուրսի ուսանողների իրազեկվածության մակարդակը ուսումնասիրվող հիմնահարցի վերաբերյալ.

- մշակվել են մտավոր զարգացման խնդիրներ ունեցող սովորողների խոսքային և ոչ խոսքային գործընթացների հետազոտության քարտ, գնահատման սանդղակ, ինչպես նաև՝ գրավոր խոսքում դրսևորվող սխալների շտկման միջոցները, մեթոդները և դրանց կիրառման պայմանները մայրենիի դասագործընթացում, փորձարարությամբ հիմնավորվել է դրանց կիրառման արդյունավետությունը:

Հետազոտության տեսական նշանակությունը: Վերլուծվել են մտավոր զարգացման խնդիրներ ունեցող դպրոցականների գրավոր խոսքի խանգարումների տեսակները, հիմնավորվել են մայրենիի ուսուցման գործընթացում գրավոր խոսքի խանգարումների շտկման մեր կողմից առաջարկվող միջոցները, ձևափոխված, հարմարեցված մեթոդները, դրանց կիրառման պայմանների արդյունավետությունը և ստացված արդյունքները:

Հետազոտության գործնական նշանակությունը: Մշակվել և գործնականորեն ներդրվել են մտավոր զարգացման խնդիրներ ունեցող դպրոցականների գրավոր խոսքի խանգարումների շտկման միջոցներ, մեթոդներ ու դրանց գործադրման պայմաններ, որոնք կիրառելի են հատուկ (օժանդակ) դպրոցի պրակտիկայում և այս երեխաների համար նախատեսված հատուկ հաստատություններում: Մշակվել են նաև խոսքային և ոչ խոսքային գործընթացների հետազոտության քարտ և գնահատման սանդղակ: Հետազոտության արդյունքները կարող են նոր տեղեկություններով լրացնել հատուկ մանկավարժության բնագավառը, ստացված

փաստերն ու մեթոդական մոտեցումները կարող են «Լոգոպեդիա» մասնագիտացման բնագավառում կիրառվել որպես դասախոսությունների և սեմինարների նյութեր:

Պաշտպանությանը ներկայացվող հիմնական դրույթները.

1. Մայրենիի ուսուցման գործընթացում մտավոր զարգացման խնդիրներ ունեցող դպրոցականների գրավոր խոսքի խանգարումներին բնորոշ են որակական առանձնահատկություններ, մասնավորապես՝ ոչ խոսքային (հոգեկան գործընթացների, գրաշարժողական կարողությունների, տեսատարածական պատկերացումների ընկալման և այլն) և խոսքային (խոսքի բաղադրիչների՝ հնչյանտաբերման, հնչութային գործընթացների, բառապաշարի, խոսքի քերականական կողմի, ինչպես նաև խոսքի ընկալման, վերլուծահամադրական գործընթացների) գործընթացների խանգարումներ և այլն:

2. Մայրենիի ուսուցման գործընթացում հատուկ (օժանդակ) դպրոցի տարրական դասարաններում սովորողների գրավոր խոսքի խանգարումների շտկմանը միտված մեր կողմից առաջարկվող միջոցների, մեթոդների և դրանց կիրառման պայմանների արդյունավետության հիմնավորում:

3. Առաջարկված միջոցների ու մեթոդների կիրառումը նպաստում է մայրենիի ուսուցման գործընթացում տարրական դասարաններում մտավոր զարգացման խնդիրներ ունեցող սովորողների գրավոր խոսքի խանգարումների շտկմանը:

Հետազոտության արդյունքների հավաստիությունն ու հիմնավորվածությունն ապահովված են հետազոտված համակարգի ընդգրկուն քանակակազմով, հետազոտության անցկացման տևական ժամկետով ու ծավալով, հետազոտման ժամանակակից մեթոդների կիրառմամբ, վիճակագրական տվյալների մանրամասն մշակմամբ և հետազոտության արդյունքների բազմակողմանի վերլուծությամբ: Փորձարարությամբ հիմնավորված է սովորողների գրավոր խոսքի խանգարումների շտկման ուղղությամբ հատուկ մանկավարժական մոտեցումների մշակումը և դրանց լայն կիրառման հնարավորությունն ու արդյունավետությունը:

Հետազոտության փորձաքննությունն ու արդյունքների ներդրումը:

Հետազոտության հիմնական դրույթները, հետևությունները և արդյունքները հաշվետվությունների տեսքով զեկուցվել և քննարկվել են Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի Ա. Տեր-Գրիգորյանի անվան հայոց լեզվի և տարրական ուսուցման մեթոդիկայի ամբիոնի նիստերի ժամանակ (2003-2008թթ), Գյումրիի Մ. Նալբանդյանի անվան մանկավարժական համալսարանում կայացած Հանրապետական գիտական նստաշրջանի (2009թ.), Վանաձորի Հ. Թումանյանի անվան մանկավարժական հալասարանում կայացած Հանրապետական գիտական նստաշրջանի ժամանակ (2011թ.), Երևանի թիվ 6 հատուկ (օժանդակ) դպրոցի մանկավարժական խորհրդում (2012թ.): Ստացված արդյունքները ներկայացվել են նաև թեզի հիմնախնդիրներից բխող հոդվածներում:

Ատենախոսության կառուցվածքը և ծավալը: Հետազոտությունն ամփոփված է համակարգչային տեքստի 151 էջում: Այն բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից, հավելվածներից: Ատենախոսության տեքստը ներառում է 3 աղյուսակ, 23 նկար, 4 հավելված:

Ատենախոսության թեմայով հրատարակվել է 9 հոդված:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածության մեջ հիմնավորված են հետազոտության արդիականությունը, նպատակը, օբյեկտը, առարկան, գիտական վարկածը, խնդիրները, մեթոդաբանական հիմքերը, մեթոդները, գիտական նորությունը, տեսական և գործնական նշանակությունը, պաշտպանությանը ներկայացվող հիմնական դրույթները:

Ատենախոսության «**Հիմնախնդրի դրվածքը**» խորագրով առաջին գլխում ներկայացված են հետևյալ 4 ենթագլուխները.

«Մտավոր զարգացման խնդիրներ ունեցող երեխաների գրավոր խոսքի խանգարումների պատմական ակնարկը» վերնագրով առաջին ենթագլխում անդրադարձ է կատարվել մտավոր զարգացման խնդիրներ ունեցող երեխաների կարդալու և գրելու գործընթացների խանգարումների վերաբերյալ գրականության տվյալների վերլուծությանը, ներկայացվել են *դիսգրաֆիա* և *դիսլեքսիա* երույթների բնութագրումներն ու մեկնաբանությունները, գրավոր խոսքի խանգարումների և հոգեկան գործընթացների անմիջական կապի հիմնավորումները:

«Գրավոր խոսքի խանգարումների առաջացման պատճառները: Գրավոր խոսքի խանգարումների դասակարգումն ըստ գրականության տվյալների» խորագրով երկրորդ ենթագլխում ներկայացված են գրելու և կարդալու գործընթացների խանգարումների առաջացման պատճառներն ու դասակարգումը, տարբեր հեղինակների կողմից առաջարկված դիսլեքսիայի և դիսգրաֆիայի տեսակների նկարագրությունը:

«Հատուկ (օժանդակ) դպրոցում սովորողների գրավոր խոսքի խանգարումների առանձնահատկությունները և մայրենիի ուսուցման գործընթացում այդ խանգարումների շտկման ժամանակակից մոտեցումներն ըստ գիտական աղբյուրների» խորագրով երրորդ ենթագլխում ներկայացվել են մտավոր զարգացման խանգարումներ ունեցող երեխաների գրավոր խոսքում դրսևորվող սխալների վերաբերյալ մասնագիտական գրականության մեջ տեղ գտած մեկնաբանությունները, գրավոր խոսքի շտկման տարբեր մեթոդների վերլուծությունը, կարևորվել են դիսլեքսիայի և դիսգրաֆիայի շտկմանն ուղղված աշխատանքներն ինչպես լոգոպեդական պարապմունքներին, այնպես էլ մայրենիի դասաժամերին:

«Հետազոտության հիմնական ուղղվածությունը, խնդիրները, մեթոդները և կազմակերպումը» խորագրով չորրորդ ենթագլխում հիմնավորված է հետազոտության հիմնական ուղղվածությունը, համաձայն որի՝ ներկայացված հիմնահարցն արդիական է, սակայն մայրենիի ուսուցման գործընթացում մտավոր զարգացման խնդիրներ ունեցող սովորողների գրավոր խոսքի խանգարումների շտկման միջոցները, մեթոդները և դրանց կիրառման պայմանները դեռևս բավարար չափով մշակված կամ հարմարեցված չեն մայրենիի դասագործընթացում գրավոր խոսքի խանգարումների շտկումն իրականացնելու գործընթացին: Հիմնախնդրի ուսումնասիրումը հնարավորություն կընձեռի մշակելու և կատարելագործելու գրավոր խոսքի շտկման միջոցները, մեթոդները և դրանց կիրառման պայմանները: Նկարագրված են նաև հետազոտության իրականացման երեք փուլերը:

Ատենախոսության «**Հատուկ (օժանդակ) դպրոցի տարրական դասարաններում սովորողների գրավոր խոսքի խանգարումների առանձնահատկությունների**

ուսումնասիրությունը» խորագիրը կրող երկրորդ գլուխը բաղկացած է չորս ենթագլուխներից և գլխի ամփոփումից:

«Հատուկ (օժանդակ) դպրոցներում մայրենիի գործող ծրագրերի վերլուծությունը»

խորագրով առաջին ենթագլխում ներկայացված է տարրական դասարաններում մայրենիի ուսուցման 1992-2012թթ. ծրագրերի վերլուծությունը: Ուշադրության են արժանացել տարեցտարի նվազող ժամաքանակները և մայրենիի ուսուցման գործընթացում սովորողների գրավոր խոսքի խանգարումների շտկման ոչ բավարար արդյունքները: Այդ փաստերը նույնպես հիմնավորում են, որ մայրենիի դասագործընթացում գործադրելի և սովորողների գրել-կարդալու գործընթացների խանգարումների շտկմանն ուղղված վարժությունների, առաջադրանքների և խաղերի համակարգ մշակելու անհրաժեշտությունն է:

«Սովորողների գրավոր խոսքի շտկման հիմնախնդրի դրվածքը մայրենիի ուսուցման գործընթացում» խորագրով երկրորդ ենթագլխում ներկայացված է ուսուցիչների մոտեցումները մայրենիի ուսումնական ծրագրերի վերաբերյալ: Հետազոտության արդյունքները թույլ են տվել եզրակացնել, որ չնայած ուսուցիչների մեծ ջանքերին, այնուամենայնիվ, աշակերտների գրել-կարդալու դժվարությունները նույնիսկ բարձր դասարաններում չեն հաղթահարվում, և սովորողների գրավոր խոսքի շտկումը մայրենիի ուսուցման գործընթացում արդյունավետ իրականացնելու, կազմակերպելու համար դեռևս կան մի շարք չլուծված հարցեր: Օրինակ, հատուկ (օժանդակ) դպրոցներում դասավանդող ուսուցիչների ոչ մասնագիտական կրթությունը, մտավոր զարգացման խնդիրներ ունեցող երեխաների հետ հատուկ մանկավարժական մեթոդներով աշխատելու վերաբերյալ ոչ բավարար իրազեկվածությունը, մասնագիտական վերապատրաստումների, հայոց լեզվով մասնագիտական գրականության պակասը և այլն:

«Հատուկ (օժանդակ) դպրոցի տարրական դասարաններում դասավանդող մայրենիի ուսուցիչների իրազեկվածությունը սովորողների գրավոր խոսքի խանգարումների շտկման վերաբերյալ» խորագրով երրորդ ենթագլխում ներկայացված են 79 ուսուցչի, դաստիարակի և լոգոպեդի, ինչպես նաև Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի Հատուկ կրթության ֆակուլտետի ավարտական կուրսերի 80 ուսանողի հարցման արդյունքները: Վերլուծվել են մայրենիի դասագործընթացում հատուկ (օժանդակ) դպրոցի տարրական դասարաններում սովորողների գրավոր խոսքի խանգարումների շտկման վերաբերյալ նրանց վերաբերմունքը և մոտեցումները: Հետազոտության արդյունքների համաձայն՝ մասնագետների (56,96%) և ուսանողների (55%) մեծ մասի կողմից կարևորվել է հենց մայրենիի դասերին սովորողների գրավոր խոսքում դրսևորվող սխալների շտկման հարցը:

«Հատուկ (օժանդակ) դպրոցներում սովորողների գրավոր խոսքում թույլ տրված հիմնական սխալների առանձնահատկությունների վերլուծությունը» խորագրով չորրորդ ենթագլխում ներկայացված են հանրապետության չորս հատուկ (օժանդակ) դպրոցների 1-4-րդ դասարանների 285 աշակերտի գրավոր խոսքի խանգարումների առանձնահատկությունների վերլուծության արդյունքները: Սովորողների գրավոր խոսքում կայուն և կրկնվող բնույթի սխալներից հիմնականում գերակշռում են հնչյունների, տառերի, վանկերի, բառերի, բառերի վերջավորությունների բացթողումները և տեղափոխումները (14%), հնչողությամբ և արտասանությամբ մոտ հնչյունների շփոթումները և փոխարինումները (12%): Ըստ նշված կարողությունների՝

առանձնացվել են 3-րդ և 4-րդ դասարաններում սովորողների գրավոր խոսքում առավել հաճախ հանդիպող սխալները (նկար 1):



Նկ. 1 Հատուկ (օժանդակ) դպրոցի տարրական դասարաններում սովորողների գրավոր խոսքում հանդիպող սխալները՝ տոկոսային հարաբերությամբ:

Վերը նշվածը թույլ է տալիս եզրակացնել, որ մտավոր զարգացման խնդիրներ ունեցող դպրոցականների գրավոր խոսքում դրսևորվող սխալների շտկումը մայրենիի գործընթացում իրականացնելու համար անհրաժեշտ է մշակել հատուկ միջոցներ ու մեթոդներ և փորձարարությամբ հիմնավորել դրանց արդյունավետությունը:

Ատենախոսության՝ **«Տարրական դասարանների՝ մտավոր զարգացման խնդիրներ ունեցող աշակերտների գրավոր խոսքի խանգարումների շտկման հիմնական ուղիները մայրենիի ուսուցման գործընթացում»** խորագրով երրորդ գլուխը բաղկացած է երեք ենթագլուխներից և գլխի ամփոփումից:

«Հատուկ (օժանդակ) դպրոցի տարրական դասարաններում սովորողների գրավոր խոսքի խանգարումների առաջարկվող շտկման միջոցների ու մեթոդների տեսական հիմնավորումը» խորագրով առաջին ենթագլխում ներկայացված է մեր կողմից մշակված գրավոր խոսքի խանգարումների շտկման մոտեցումների օրինակելի համակարգ՝ կազմված հատուկ մանկավարժական, լեզվաբանական,

սոցիալ-հոգեբանական և լոգոպեդական բաժիններից ու ենթաբաժիններից: Մասնագիտական գրականության վերլուծության և մեր կողմից կատարված հետազոտության արդյունքները թույլ են տվել.

- կազմել գրավոր խոսքի խանգարումների շտկման բազմակողմանի մոտեցման օրինակելի համակարգ.

- ընտրել, մշակել և այս երեխաների զարգացման առանձնահատկություններին հարմարեցնել գրավոր խոսքի խանգարումների շտկման հատուկ միջոցները, մեթոդները և դրանց կիրառման պայմանները.

- մանկավարժական գիտափորձում գործադրել մեր կողմից մշակված մայրենիի ուսուցման գործընթացում կիրառելի գրավոր խոսքի խանգարումների շտկմանն ուղղված խաղերի, վարժությունների ու առաջադրանքների օրինակելի համակարգ.

- կազմել մտավոր զարգացման խանգարումներ ունեցող երեխաների ոչ խոսքային և խոսքային գործընթացների հետազոտական քարտ և գնահատման սանդղակ:


Մեր կողմից մշակված օրինակելի համակարգում արտացոլված են 4 տարբեր բնագավառների այն կարևոր գործոններն ու պայմանները, որոնք կիրառելի են հատուկ (օժանդակ) դպրոցներում սովորողների գրավոր խոսքի խանգարումների շտկումն իրականացնելիս (նկ.2):

Այդ համակարգում մեր կողմից կարևորվել է.

- **հատուկ մանկավարժական մոտեցումը**, ըստ որի լոգոպեդական աշխատանքում և մայրենիի ուսուցման գործընթացում պետք է հաշվի առնել **ընդհանուր և հատուկ մանկավարժության սկզբունքների** (օնտոգենետիկական, զարգացման, համալիր մոտեցման, տարբերակված մոտեցման և այլն), **հոգեբանամանկավարժական մեթոդների** (դիտում, գրույց, անհատական և խմբային լաբորատոր հետազոտում, մանկավարժական գիտափորձ և այլն) **կիրառումը**, **մտավոր զարգացման խանգարումներ ունեցող երեխաների ուսուցման պայմանները** (դասարանում աշակերտների փոքրաթիվ քանակ, դիդակտիկ նյութերի առկայություն, ուսուցիչների կողմից աշակերտների դասին մասնակցելու բարձր մոտիվացիայի ապահովում և այլն), ինչպես նաև **ուսումնական գործընթացը** (խաղային ուսուցում, անհատական և տարբերակված ուսուցում):

- **լեզվաբանական մոտեցումը**. կարևոր է, որ աշակերտներն ունենան լեզվական նախագիտելիքների ու լեզվական տարրական գիտելիքների որոշակի մակարդակ՝ խոսք կառուցելու կարողություն, գաղափար նախադասության, բառի, վանկի, ձայնավոր և բաղաձայն հնչյուն-տառերի մասին, ճանաչեն ձեռագիր և տպագիր տառերը և այլն, կարողանան վերլուծել, համադրել, ընդհանրացնել, մասնավորեցնել և այլն: Նշված գիտելիքները նպաստում են դպրոցականների խոսքի և մտածողության, գրել-կարդալու, քերականորեն ճիշտ մտքեր ձևակերպելու կարողությունների զարգացմանը, ուսումնական այլ առարկաներից անհրաժեշտ գիտելիքների ձեռքբերմանը:

- **սոցիալ-հոգեբանական մոտեցումը**. մտավոր զարգացման խանգարումներ ունեցող երեխաներն իրենց հոգեֆիզիոլոգիական զարգացման առանձնահատկություններով տարբերվում են. ուսումնական նյութը յուրացնելու նրանց դժվարությունները պայմանավորված են խնդրի ծանրության աստիճանով, ոչ ժամանակին ու ոչ մասնագիտական աջակցության ցուցաբերմամբ, սոցիալական



Նկ. 2 Մտավոր զարգացման խնդիրներ ունեցող դպրոցականների գրավոր խոսքի խանգարումների շտկման համակարգային մոտեցման գծապատկեր

միջավայրում նրանց ինտեգրման, ուսումնական գործընթացին մասնակից դառնալու, շրջապատի հետ շփման և հաղորդակցման մեջ լինելու սահմանափակումներով և այլն: Կարևոր է հաշվի առնել այս երեխաների հոգեկան գործընթացների վիճակը, անվստահությունը, սովորելու ցածր մոտիվացիան, հետաքրքրությունների պակասը և այլն: Մայրենիի ուսուցման գործընթացում կարևոր և օգտակար է նույնիսկ չնչին հաջողության և կատարված աշխատանքի համար այս երեխաներին խրախուսելը:

լոգոպեդական մտեցումը. լոգոպեդական մեթոդներն ու հնարներն անհրաժեշտ է գործադրել՝ հաշվի առնելով երեխայի խոսքի զարգացման նախադրյալների (գոգոսք, թոթովանք, առաջին բառեր, առաջին նախադասություն), խոսքի բոլոր բաղադրիչների (հնչարտաբերում, հնչությային գործընթացներ, բառապաշար, խոսքի քերականական կառույց), գրել-կարդալու գործընթացների, խոսքը պայմանավորող գործոնների՝ նյարդային համակարգի, հոգեկան գործընթացների գրաշարժողական կարողությունների զարգացման առանձնահատկությունները և այլն: Այս մտեցումը ենթադրում է երեխայի հոգեկան գործընթացների, բանավոր և գրավոր խոսքի շտկում, հաղորդկացման կարողությունների զարգացում:

«Հատուկ (օժանդակ) դպրոցի տարրական դասարաններում սովորողների գրավոր խոսքի խանգարումների շտկման հիմնական միջոցները, մեթոդները և դրանց կիրառման պայմանները» խորագրով երկրորդ ենթագլխում մեկնաբանվել են մտավոր զարգացման խնդիրներ ունեցող դպրոցականների գրավոր խոսքի խանգարումների շտկման **հիմնական միջոցները** (խաղեր, վարժություններ ու առաջադրանքներ), **հարմարեցված մեթոդները** (զննական, խոսքային և գործնական) և դրանց **կիրառման պայմանները**՝ հաշվի առնելով ընդհանուր դիդակտիկական և հատուկ մանկավարժության սկզբունքները: Ներկայացվել են այս երեխաների գրավոր խոսքի խանգարումները պայմանավորող ոչ խոսքային և խոսքային գործընթացների խանգարումների շտկման հիմնական միջոցները, մշակվել և պայմանականորեն խմբավորվել են խաղեր, վարժություններ ու առաջադրանքներ ուղղված՝

- **տեսատարածական պատկերացումների զարգացմանը** (ժամանակի և տարածության մեջ կողմնորոշվելու, սեփական անձի գրաված տեղն ու դիրքը պատկերացնելու, խոսքում ժամանակային ու տարածական (*հեռու, մոտ, կարճ, երկար, շատ, քիչ, այսօր, երեկ, վաղը* և այլն) կապերը ճիշտ գործածելու, տեսողությամբ ընկալելու, ճանաչելու և հիշելու, վերլուծելու և համադրելու կարողությունների զարգացում):

- **հնչությային գործընթացների զարգացմանը** (հնչությային ընկալման, բառը հնչյունավանկային վերլուծության ենթարկելու կարողության զարգացում):

- **հոգեկան գործընթացների զարգացմանը** (հիշողության, ուշադրության, ընկալման, մտածողության զարգացում):

- **մանր (գրաշարժողական կարողությունների) շարժողականության զարգացմանը:**

- **բանավոր խոսքի** (հնչարտաբերության, բառապաշարի, խոսքի քերականական կողմի և կապակցված խոսքի) **զարգացմանը և գրավոր խոսքի խանգարումների շտկմանը** (հնչյունատառային, բառային և քերականական ձևաբանական ու շարահյուսական):

- **հնչարտաբերական կարողությունների զարգացմանը:**
- **բառապաշարի զարգացմանը:**
- **խոսքի քերականական կողմի զարգացմանը:**
- **կապակցված խոսքի զարգացմանը:**

Վերը նշված խաղերի, վարժությունների ու առաջադրանքների հատուկ համակարգը հիմք է հանդիսացել կազմելու մտավոր զարգացման խանգարումներ ունեցող երեխաների ոչ խոսքային և խոսքային գործընթացների հետազոտման քարտ և գնահատման սանդղակ, որն իրենից ներկայացնում է սովորողների տեսողական, լսողական, խոսքային ուշադրության, հիշողության և ընկալման, մանր շարժողականության, բանավոր և գրավոր խոսքի վիճակի և հոգեկան մյուս գործընթացների հետազոտման գործիք:

«Տարրական դասարանների՝ մտավոր զարգացման խնդիրներ ունեցող աշակերտների գրավոր խոսքի խանգարումների շտկման մտեցումների արդյունավետության փորձարարական հիմնավորումը» խորագրով երրորդ ենթագլխում ներկայացվել են ք. Երևանի թիվ 6 և ք. Աբովյանի թիվ 1 հատուկ (օժանդակ) դպրոցներում 2009-2012թթ., մեր կողմից իրականացված փորձարարական ուսումնասիրությունների արդյունքները: Մանկավարժական եռամյա գիտափորձին մասնակցել են տարրական դասարանների 44 աշակերտ, նրանցից 22-ը 3-րդ դասարանից են, իսկ 22-ը՝ 4-րդ: Աշակերտներին խմբերի բաժանելիս հաշվի են առնվել նրանց հավասար կարողությունները՝ անհատական, տարիքային և հոգեկան, մտավոր զարգացման առանձնահատկությունները, ուսումնական կարողությունները, բանավոր խոսքի, գրավոր խոսքի խանգարման բնույթը և այլն: Փորձարարական խմբում ընդգրկվել է 21 աշակերտ, որից 11-ը 3-րդ, իսկ 10-ը՝ 4-րդ դասարանից: Ստուգողական խմբում՝ 23 աշակերտ, որից 11-ը 3-րդ, իսկ 12-ը՝ 4-րդ դասարանից:

Գիտափորձի ընթացքում սովորողների գրել-կարդալու գործընթացում հիմնականում գերակշռել են հնչյուն-տառերի, վանկերի, բառերի ու տողերի բացթողումները, փոխարինումները, շփոթումներն ու տեղափոխումները, քերականական բնույթի սխալները, բառերի անավարտ, միացյալ կամ անջատ գրությունները, տառերի ու բառերի հավելումները, կրկնակ գրություններն ու ընթերցումները, տպագիր գրությունները, կարդալու և գրելու տեխնիկական և իմաստային կողմի խանգարումները, տեսատարածական պատկերացումների խանգարումներով պայմանավորված խանգարումները:


Նետազոտվող խմբի գրավոր խոսքում թույլ տված սխալների վերլուծության արդյունքում անհրաժեշտ ենք համարում նշել, որ թե՛ կարդալու և թե՛ գրելու գործընթացների խանգարումների տարբեր տեսակները մաքուր կամ առանձին ձևով չեն դրսևորվել: Այս մասին նշել են նաև մի շարք հեղինակներ (Օ. Ա. Величенкова, 2001; А. К. Аксенова, 2004; Н. Н. Яковлева, 2007; А. Н. Корнев, О. А. Ишимова, 2010; Л. С. Журавлева, 2015 и др.):

Մանկավարժական գիտափորձի ընթացքում վերլուծվել և ներկայացվել են սովորողների տեսատարածական պատկերացումների, հնչոթային, վերլուծահամադրական գործընթացների, գրաշարժողական կարողությունների խանգարումներով պայմանավորված գրել-կարդալու տեխնիկական և իմաստային կողմերի սխալները, հնչյուն-տառերի բացթողումները, հնչողությամբ և գրությամբ մոտ հնչյուն-տառերի շփոթումները, փոխարինումները, աղավաղումները, տառը

տառին, վանկը վանկին համադրելու, բառն ամբողջացնելու դժվարությունները, ինչպես նաև քերականական բնույթի խանգարումները:

Փորձարարական խմբում կիրառվել է մեր կողմից մշակված խաղերի, վարժությունների ու առաջադրանքների օրինակելի համակարգը: Մանկավարժական գիտափորձի արդյունքները ներկայացված են գծապատկեր 1-ում մինչ գիտափորձը և գիտափորձից հետո, որտեղ երևում է, որ սխալների քանակը փորձարարական խմբում 3-րդ դասարանում նվազել է 26,18%-ով, իսկ 4-րդ դասարանում՝ 31,3%-ով: Մինչդեռ ստուգողական խմբում սխալների թիվը 3-րդ դասարանում կրճատվել է միայն 18,37%-ով, իսկ 4-րդ դասարանում՝ 5,68%-ով (գծապատկեր 1):

Մանկավարժական գիտափորձի արդյունքների հետագա վերլուծությունների տվյալներով փորձարարական խմբի աշակերտների գրավոր խոսքում նվազել է բառերի միացյալ գրությունների թիվը՝ երրորդ դասարանում՝ 40%-ով, չորրորդ դասարանում՝ 49%-ով: Կրճատվել է ինչպես տառերի, բառերի հավելումների թիվը՝ գրավոր խոսքում՝ երրորդ դասարանում՝ 47,57%-ով, իսկ չորրորդ դասարանում՝ 37,5%-ով, այնպես էլ անջատ, անավարտ գրությունների թիվը՝ երրորդ դասարանում՝ 47,82%-ով, իսկ չորրորդում՝ 37,2%-ով:



Գծապատկեր 1. Սովորողների գրավոր խոսքում թույլ տված սխալների փոփոխությունները մանկավարժական գիտափորձի վերջում

Փորձարարական խմբում աշակերտների տեսատարածական պատկերացումների խանգարմամբ պայմանավորված սխալները երրորդ դասարանում նվազել են 22,87%-ով, իսկ չորրորդ դասարանում՝ 42,13%-ով, կրկնակ գրությունների ու ընթերցումների թիվը երրորդ դասարանում կրճատվել է 36,87%-ով, իսկ չորրորդում՝ 47,43%-ով, ետևառաջ ընթերցումների և գրությունների թիվը կրճատվել է 3-րդ դասարանում 32,56%-ով, չորրորդ դասարանում՝ 39,21%-ով:

Ստուգողական խմբում տեսատարածական պատկերացումների խանգարումներով պայմանավորված սխալները երրորդ դասարանում նվազել են 16,08%-ով, իսկ չորրորդ դասարանում՝ 20,76%-ով: Կրկնակ գրությունների և ընթերցումների թիվը պակասել է երրորդ դասարանում 34,53%-ով, չորրորդ դասարանում՝ 26,31%-ով, իսկ օրինակ, ետևառաջ ընթերցումների և գրությունների թիվը կրճատվել է 3-րդ դասարանում 29,76%-ով, չորրորդում՝ 25%-ով:

Հետազոտության արդյունքների վերլուծությունները ցույց են տվել, որ

մանկավարժական գիտափորձի ընթացքում փորձարարական խմբում ընդգրկված երրորդ և չորրորդ դասարանների աշակերտների գրավոր խոսքում դրսևորվող սխալներն ամբողջությամբ չեն վերացել, սակայն պետք է նշել, որ դրանց թիվն ընդհանուր առմամբ նվազել է՝ պայմանավորված մայրենիի դասերին մեր կողմից առաջարկված խաղերի, վարժությունների ու առաջադրանքների գործադրմամբ: Մխալների որակական և քանակական փոփոխությունները կարելի է տեսնել նաև առենախոսության մեջ ներկայացված գրավոր աշխատանքների օրինակներից [տե՛ս առենախոսության 87-88, 122-131 էջերը]:

Այսպիսով՝ մանկավարժական գիտափորձի արդյունքները ցույց են տվել, որ մեր կողմից առաջարկված և մայրենիի ուսուցման գործընթացում գործադրված հատուկ միջոցները, մեթոդները և դրանց կիրառման պայմանները նպաստել են հատուկ (օժանդակ) դպրոցի տարրական դասարաններում սովորողների գրավոր խոսքի խանգարումների շտկմանը: Ելնելով մանկավարժական մեր եռամյա գիտափորձի արդյունքներից՝ կարող ենք եզրակացնել, որ գրավոր խոսքի խանգարումների շտկումը հնարավոր է իրականացնել նաև մայրենիի ուսուցման գործընթացում, և այն ոչ թե կրկնում, այլ շարունակում ու փոխլրացնում է լոգոպեդիական աշխատանքը: Ասվածը հիմնավորում են փորձարարական և ստուգողական խմբերի համեմատական ցուցանիշների արդյունքները:

Եզրակացություն

Մեր կողմից անցկացված հետազոտության արդյունքները թույլ են տալիս կատարել հետևյալ հետևությունները.

1. Մտավոր զարգացման խնդիրներ ունեցող երեխաների գրավոր խոսքի խանգարումների շտկման հիմնախնդիրն արդիական է, ունի տեսական և գործնական նշանակություն: Այս հիմնահարցի վերաբերյալ ուսումնասիրությունները բազմաթիվ են, սակայն լիարժեք չեն: Հիմնախնդրի արդիականությունը որոշվում է սովորողների գրավոր խոսքի խանգարումների շտկման գործընթացը նաև մայրենիի դասերին իրականացնելու կարևորությամբ:

2. Մեր ուսումնասիրությունները վկայում են, որ հատուկ (օժանդակ) դպրոցի տարրական դասարաններում մայրենիին հատկացված դասաժամերը ծրագրով տարեցտարի նվազել են (տե՛ս առենախոսության 57-59 էջերում ներկայացված 1992-2012թթ մայրենիի ծրագրի համեմատական վերլուծությունը)՝ դրանով սահմանափակելով մայրենիի դասերին աշակերտների կարդալու և գրելու գործընթացների խանգարումների շտկմանն ուղղված ուսուցիչների աշխատանքը: Մայրենիի ուսուցման գործընթացում սովորողների գրավոր խոսքի խանգարումների շտկման համար չկան անհրաժեշտ արդյունավետ միջոցներ, իսկ խաղերի, վարժությունների ու առաջադրանքների մեթոդական ուղեցույցներ հայերենով դեռևս չեն մշակվել: Գործընթացին խոչընդոտում են նաև հատուկ (օժանդակ) դպրոցում դասավանդող ուսուցիչների մեծ մասի՝ մասնագիտական ժամանակակից գրականությանը բավարար չափով ծանոթ չլինելու և համապատասխան սեմինարների, վերապատրաստումների ու գիտաժողովների ոչ բավարար չափով մասնակցությունն ու ընդգրկվածությունը:

3. Հատուկ (օժանդակ) դպրոցներում դասավանդող ուսուցիչների և

ավարտական կուրսի ուսանողների հետ մեր անցկացրած հարցումների արդյունքների համաձայն՝ սովորողների գրավոր խոսքի խանգարումների շտկումը պետք է իրականանա ոչ խոսքային և խոսքային գործընթացների զարգացմանը զուգահեռ: Սովորողների գրավոր խոսքի հիմնական սխալների վերլուծությունները ցույց են տվել, որ ավելի շատ գերակշռում են հնչյունների, տառերի, վանկերի, բառերի վերջավորությունների բացթողումները, տեղափոխումները (14%), շփոթումներն ու փոխարինումները (12%), ագրամատիզմները (12%), իմաստային ընկալման սխալները (12,3%): Այս արդյունքների հիման վրա մեր կողմից մշակվել են սովորողների գրավոր խոսքի խանգարումների շտկման տեսագործնական մոտեցումներ, որոնք ներկայացված են ատենախոսության երրորդ գլխում:

4. Գիտափորձից հետո սովորողների գրավոր խոսքում դրական փոփոխություններ են նկատվել. փորձարարական խմբի 3-րդ դասարանցիների թույլ տված սխալների քանակը նվազել է 26,18%-ով, իսկ 4-րդ դասարանցիների սխալների քանակը՝ 31,3%-ով: Մինչդեռ ստուգողական խմբի 3-րդ դասարանցիների սխալների թիվը կրճատվել է 18,37%-ով, իսկ 4-րդ դասարանցիների սխալների թիվը՝ 5,68%-ով:

5. Մանկավարժական գիտափորձում ընդգրկված սովորողների գրավոր խոսքի հիմնական սխալների առանձնահատկությունների վերլուծության արդյունքում մեր կողմից առանձնացված սխալների (մոտ 18 հիմնական տեսակ) մեջ գերակշռել են հնչյունահնչությային, տեսատարածական պատկերացումների, գրաշարժողական կարողությունների գրել-կարդալու տեխնիկական և իմաստային կողմերի խանգարումներով պայմանավորված սխալներ: Սովորողների գրավոր խոսքի խանգարումների շտկումը մայրենիի ուսուցման գործընթացում իրականացնելու նպատակով մեր կողմից մշակվել և առաջարկվել են խաղերի, վարժությունների ու առաջադրանքների հատուկ համակարգ, ինչպես նաև մտավոր զարգացման խանգարումներ ունեցող երեխաների ոչ խոսքային և խոսքային գործընթացների հետազոտման քարտ և գնահատման սանդղակ:

Ատենախոսության հիմնական բովանդակությունն արտացոլված է հետևյալ հրապարակումներում.

1. Չարչյան Ա. Ռ., Տարրական դասարանների՝ մտավոր զարգացման խնդիրներ ունեցող աշակերտների գրավոր խոսքի խանգարումների շտկման հիմնական մոտեցումները մայրենիի ուսուցման գործընթացում: ԿԱՃԱՌ գիտական տարեգիրք, Երևան, «Զանգակ-97» 2017, էջ 352-359:

2. Ազարյան Ռ. Ն., Չարչյան Ա. Ռ., Դիսլեքսիան և աչքի տեսաշարժողական գործառույթները: Մանկավարժություն: Գիտամեթոդական ամսագիր 8, Երևան, 2013, էջ 27-37:

3. Չարչյան Ա. Ռ., Հատուկ (օժանդակ) դպրոցի սովորող գրավոր խոսքի խանգարումներով դպրոցականների խաղային ուսուցման ընդհանուր բուժագիրք: Շտկողական մանկավարժություն: Մանկավարժական միտք, Եր., 2011, էջ 147-254:

4. Չարչյան Ա. Ռ., Հատուկ (օժանդակ) դպրոցների կրթական չափորոշիչների պահանջները հարթահարելու խնդրի շուրջ: Վանաձորի Հովհ. Թումանյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ: ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ԵՅՈՒԹԵՐ Բ (հասարակագիտական պրակ), Վանաձոր 2011, էջ 314-329:

5. Չարչյան Ա. Ռ., Հատուկ (օժանդակ) դպրոցի սովորողների կարգալու և գրելու կարողությունների ձևավորման խնդիրների վերլուծություն: Շտկողական մանկավարժություն: Մանկավարժական միտք: «Տաթն գիտակրթական համալիր» 1-2, Երևան, «Զանգակ-97», 2011, էջ 235-240:

6. Չարչյան Ա. Ռ., Կարդալու կարողության ձևավորման գործընթացի փուլային առանձնահատկությունները: Հատուկ կրթություն: Գիտամեթոդական տեղեկատու, Եր., 2009, էջ 39-54:

7. Չարչյան Ա. Ռ., Խոսքիմասային միջավայրի և վերլուծիչների դերը խոսքի զարգացման գործում-Հանրապետական գիտական նստաշրջանի նյութեր, Պրակ1,Գյումրի, 2009, էջ 42-44:

8. Չարչյան Ա. Ռ., Խոսքային խանգարում ունեցող երեխաների հետ իրականացվող աշխատանքները հատուկ (օժանդակ) դպրոցում - Հատուկ մանկավարժություն և հոգեբանություն: Գիտամեթոդական հոդվածների ժողովածու, Եր., 2007, էջ 81-87:

9. Չարչյան Ա. Ռ., Հատուկ (օժանդակ) դպրոցի սովորողների խոսքային խանգարումների շտկման հիմնախնդրի շուրջ - Հատուկ մանկավարժություն և հոգեբանություն: Գիտամեթոդական հոդվածների ժողովածու, Եր., 2005, էջ 60-64:

**СРЕДСТВА И МЕТОДЫ КОРРЕКЦИИ ПИСЬМЕННОЙ РЕЧИ УЧАЩИХСЯ
СПЕЦИАЛЬНОЙ (ВСПОМОГАТЕЛЬНОЙ) ШКОЛЫ В ПРОЦЕССЕ ОБУЧЕНИЯ
РОДНОМУ ЯЗЫКУ**

АВТОРЕФЕРАТ

Диссертация на соискание ученой степени кандидата педагогических наук по специальности 13.00.02 „Методика преподавания и воспитания”.

Защита диссертации состоится 16 мая 2019г. в 12:00 часов на заседании специализированного совета 020 ВАК „Педагогика” по присужденую ученых степеней при Армянском государственном педагогическом университете им. Х. Абовяна по адресу: 0010, г. Ереван, ул. Тиграна Меца 17.

РЕЗЮМЕ

Актуальность исследования обусловлена прежде всего тем, что в последние годы значительно возросло число учащихся, с трудом осваивающих школьную программу. Эти учащиеся в процессе письма и чтения допускают ошибки, носящие устойчивый и повторяющийся характер. Среди учащихся специальной (вспомогательной) школы, имеющих органическое поражение головного мозга, стойкое нарушение познавательной деятельности и вторичные отклонения в развитии, эта проблема наиболее выражена нарушениями устной и письменной речи, в частности, в процессе чтения и письма — дислексией и дисграфией.

Согласно литературным данным (Н. А. Граборов, 1961; Л.В. Занков, 1999; Г. Р. Овян, 2007; В. В. Воронкова, 2009; Э. Р. Тадевосян, 2011; Л. Н. Ефименкова, 2015 и др.), существующие подходы к коррекции письменной речи у учащихся с нарушениями интеллектуального развития в процессе обучения родному языку недостаточно разработаны и мало эффективны. Это усложняет не только процесс чтения и письма, но и отрицательно сказывается на приобретении знаний, коммуникации, социальной адаптации и интеграции этих детей.

Разработка специальных средств, методов и педагогических условий их применения для коррекции нарушений чтения и письма у умственно отсталых учащихся в процессе обучения родному языку станет основой частичного решения этой проблемы.

Выше изложенное и определяет проблему исследования как весьма актуальную, теоретически и практически значимую.

Цель исследования. Разработать средства и методы коррекции нарушений письменной речи у учащихся начальных классов специальной (вспомогательной) школы и внедрить их в процесс обучения родному языку.

Задачи исследования:

1. изучить и проанализировать современные подходы к коррекции нарушений письменной речи у учащихся начальных классов специальной (вспомогательной) школы в процессе обучения родному языку;

2. определить основные виды нарушений письменной речи у учащихся начальных классов специальной (вспомогательной) школы, проявляющиеся в процессе обучения родному языку;

3. разработать средства, методы и условия их применения для коррекции нарушений письменной речи у умственно отсталых младших школьников в процессе обучения родному языку и экспериментально обосновать их эффективность.

Научная новизна исследования:

- выявлены и проанализированы особенности нарушений письменной речи у учащихся, имеющих нарушения в умственном развитии, характер и частота ошибок, определены содержание и способы проведения различных видов письменных работ;

- определен уровень информированности учителей и воспитателей начальных классов специальной (вспомогательной) школы и старшекурсников факультета „Специального образования” в изучаемых вопросах;

- разработаны карта обследования речевых и неречевых процессов учащихся, имеющих отклонения в умственном развитии, шкала оценивания, а также средства, методы и условия их применения для определения ошибок, проявляющихся в письменной речи, экспериментально обоснована эффективность их внедрения в процесс обучения родному языку.

Теоретическая значимость исследования. Проанализированы виды нарушений письменной речи у учащихся, имеющих отклонения в умственном развитии; обоснована эффективность предложенных средств, метод и условий их применения для коррекции нарушений письменной речи в процессе обучения родному языку, а также теоретически обоснованы полученные результаты исследования.

Практическая значимость исследования. Разработаны и внедрены в практику средства и методы коррекции нарушений письменной речи у учащихся, имеющих нарушения в умственном развитии, карта обследования речевых и неречевых процессов и шкала оценивания. Результаты исследования могут быть использованы при подготовке лекционных и практических занятий по специальности „Логопедия”.

Апробация результатов исследования. Основные положения, выводы и результаты исследования обсуждены на заседаниях кафедры армянского языка и методики начального обучения имени А.Тер-Григоряна АГПУ им. Х. Абовяна (2003-2008 г.г.); на Республиканских научных сессиях, состоявшихся в Гюмрийском педагогическом университете им. М. Налбандяна (2009), в Ванадзорском педагогическом университете им. О. Туманяна (2011); на заседании педагогического совета Ереванской специальной (вспомогательной) школы № 6 (2012). Полученные результаты изложены также в 9 статьях по теме исследования, опубликованных в Армении.

Структура и объем диссертации. Работа изложена на 151 странице компьютерного текста, состоит из введения, трех глав, заключения, списка использованной литературы, приложения. Текст диссертации содержит 3 таблицы, 23 рисунка и 4 приложения.

THE MEANS AND METHODS OF CORRECTION OF WRITTEN SPEECH OF SPECIAL (AUXILIARY) SCHOOL STUDENTS IN THE PROCESS OF TEACHING MOTHER TONGUE

Dissertation for pursuing a Degree of Candidate of Pedagogical Sciences in specialty of 13.00.02 – “Methodology of Teaching and Education“.

The official defence of the dissertation will take place at 12:00 PM, May 16, 2019, at the Higher Attestational Commission’s 020 “Pedagogy” Degree-Awarding Scientific Council’s meeting at Kh. Abovyan Armenian State Pedagogical University (Address: Yerevan, 0010, Tigran Mets ave., 17).

SUMMARY

The relevance of the research is determined by the fact that during the last years the number of students increases who have difficulties to learn the curriculum, sustainably and repeatedly make mistakes in the process of reading and writing. So, special school students with organic brain damage which determines persistent disturbance of cognitive activity have speech disorders as secondary manifestations, specifically in the process of reading and writing- dyslexia and dysgraphia.

As the analysis of literature on the studied theme shows, according to many authors (V.V.Voronkova, 1994; A.K.Akseneva, 2004, etc.), the existed approaches to correction of written language of students with cognitive development disorders in the process of teaching mother tongue are not efficient enough. And the methods, means of correction and the conditions of application of the processes of reading and writing of these students are not enough elaborated. This complicates not only the process of reading and writing but negatively influences on the processes of communication, acquisition of knowledge, social adaptation and integration of these children (A.R.Luria, 1950; R.I.Lalaeva, 2002;; S.N.Kostromina, 2008; L.N.Efimenkova, 2015; L.S.Vigotsky, 2017. This issue has been studied from from both general (V.A.Sukhomlitskij, 1970; V.P.Kashchenko, 1994), and special pedagogy perspectives. (N.A.Grabova, 1961; L.V.Zankov, 1999; V.V.Voronkova, 2009; B.P.Puzanov, 2001, etc.). The correction and prevention of written language disorders have been studied by Armenian authors, either. (A.V.Avagyan, 2005; G.R.Hovyan, 2007; A.G.Grigoryan, 2007; Zh.A.Paylozyan, 2007; A.V.Mikaelyan, 2010; E.R.Tadevosyan, 2011).

The purpose of the research is elaboration of means and methods of correction of written language disorders of elementary school students in special (auxiliary) schools and their implementation in the process of teaching of mother tongue.

The objectives of the research are:

1. To study and analyze the contemporary approaches to correction of written language disorders of elementary school students in special (auxiliary) schools in the process of teaching of mother tongue.

2. To define the main types of written language disorders of elementary school students in special (auxiliary) schools that are manifesting in the process of teaching of mother tongue.

3. Develop means and methods of correction of written language disorders of students with cognitive development disorders, the conditions of their implementation in the process of teaching of mother tongue and experimentally justify their efficacy.

The scientific novelty of the research:

- The peculiarities of written language disorders of students with cognitive development disorders have been found and the frequency of mistakes made by them are found and analyzed; the content and means of organization of different types of written works have been defined.

- The level of competency of teachers of elementary schools in special (auxiliary) schools and graduate students of the specialty of “Special Pedagogy” have defined related to the studied issue.

- A map of study of verbal and nonverbal processes of students with cognitive development disorders, assessment scale and means, means and methods of correction of mistakes in written speech, and the condition of their application are elaborated, experimentally the efficacy of their implementation in the process of teaching of mother tongue is substantiated.

The theoretical significance of the research. The types of disorders of written speech of students with cognitive development disorders are analyzed; the efficacy of the methods of correction of written language disorders in the process of teaching of mother tongue, adapted methods, conditions of their application that we have suggested and the results obtained are substantiated.

The practical significance of the research. Means, methods of correction of disorders of written language of students with cognitive development disorders have been elaborated and implemented. A map of study of verbal and nonverbal processes and a scale of assessment have been elaborated.

The research results, specifically the methodical approaches that we have suggested can be used as a material for preparation to lectures and practical lessons for speech therapists.

The approbation of the research results. The main concepts, conclusions and results of the study presented as reports have been discussed at the meetings of the Chair of Armenian Language and Methodics of the Elementary teaching after A.Ter-Grigoryan, Kh.Abovyan ASPY (2003-2008), at republican scientific sessions taken place at Gyumri Pedagogical University after M.Nalbandyan (2009), Vanadzor Pedagogical University after H.Tumanyan (2011), at the meetings of pedagogical board of Yerevan Special school 6. The data obtained are published in articles on the research theme in Armenia.

The structure of the dissertation. The volume of the dissertation is 151 pages of computer text. The dissertation consists of introduction, three chapters, conclusions, a list of literature, appendices. The text of the dissertation contains 3 tables, 24 pictures, 4 appendices. 9 articles are published on the theme of dissertation.